

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԱՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՀԵՏ

30.07.2014

Կոտայքի մարզպետ Ա. Զարույթունյանը հանդիպում է ունեցել Հանքավանի <<Խոտորջուր>> առողջարանում իրենց ամառային հանգիստն ու մարզական պարապմունքներն անցկացնող Կյուկուշինկայ կարատեի ազգային ֆեդերացիայի սաների հետ:

Մինչ պաշտոնական հանդիպումը Վարդավառի տոնի շրջանակներում պատանի մարզիկների համար Կոտայքի մարզպետի նախաձեռնությամբ կազմակերպվել է մատաղի արարողություն: Վարդավառի ծիսական տոնի խորհուրդը ներկայացրել և մատաղի օրհնության կարգն իրականացրել է Մեղրաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Զարույթուն քահանա Ծատուրյանը:

Պատանի մարզիկները Կոտայքի մարզպետին դիմավորել և ողջունել են առողջարանի մարզադաշտում կազմակերպված մարզական ցուցադրական վարժանքով, ներկայացրել Կյուկուշինկայ կարատե մարզաձևի՝ իրենց գիտելիքներն ու հմտությունները:

Կոտայքի մարզպետ Ա. Զարույթունյանը զրուցել է պատանի մարզիկների հետ, պատասխանել նրանց հարցերին և քննարկել ֆեդերացիայի հետ շարունակական համագործկացությանը միտված հարցեր: